

ԻՐԱԶԵԿՄԱՆ ԹԵՐԹԻԿ
ԲՆԱԿԶՈՒԹՅԱՆԸ ՑՈՒՑԱԲԵՐՎՈՂ ԱՄԲՈՒԼԱՏՈՐ-ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ

<p>Պետության կողմից երաշխավորված <u>ԱՆՎՃԱՐ</u> բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում բնակչության բոլոր խմբերի համար անվճար տրամադրվում է ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական օգնության և սպասարկման հետևյալ ծավալը՝</p>	<p>Ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական կազմակերպություններում 18 տարին լրացած անձանց համար իրականացվող <u>ՎՃԱՐՈՎԻ</u> ծառայություններն են.</p>
<p>առողջության առաջնային պահպանման ծառայությունները (տեղամասային թերապևտի, տեղամասային մանկաբույժի, ընտանեկան բժշկի կողմից)</p>	<p>տնային պայմաններում լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունների իրականացումը</p>
<p>ամբուլատոր-պոլիկլինիկական դիսպանսերային և նեղ մասնագետների կողմից իրականացվող բժշկական օգնությունը՝ առողջության առաջնային պահպանման գործառույթ իրականացնող բժշկի ուղեգրմամբ</p>	<p>բնակչության սոցիալապես անապահով և հատուկ խմբերում չընդգրկված անձանց համար՝ տնային պայմաններում բժշկի նշանակումով բուժքրոջ կողմից կատարվող միջամտությունները (վիրակապություններ, միջմկանային, ներերակային ներարկումներ և այլն)</p>
<p>տեղամասային թերապևտի, տեղամասային մանկաբույժի, ընտանեկան բժշկի, իսկ առանձին հիվանդությունների գծով՝ համապատասխան մասնագետի նշանակմամբ, անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղեր ստանալու իրավունք ունեցող անձանց դեղերով ապահովումը (այդ թվում՝ պալիատիվ բուժօգնության շրջանակներում ՀՀ կառավարության 23.11.2006 թ. N 1717-Ն որոշման հավելված 1-ով հաստատված անվճար կամ արտոնյալ պայմաններով ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական հաստատությունների միջոցով դեղեր ձեռք բերելու իրավունք ունեցող բնակչության սոցիալական խմբերի ցանկում ընդգրկված անձանց դեղերով ապահովումը)</p>	<p>առանց բժշկական ցուցումների և առանց համապատասխան ուղեգրման բժշկական խորհրդատվությունը և լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունները, ինչպես նաև այն քաղաքացիների տնային կանչերը, որոնք ընտրել և գրանցվել են այլ պոլիկլինիկայում աշխատող առողջության առաջնային պահպանման բժշկի մոտ</p>
<p>պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորող, ազատ ընտրության սկզբունքով առողջության առաջնային պահպանման ծառայություններ մատուցող բժշկի մոտ հավաքագրված ուսանողների (այդ թվում՝ Արցախի Հանրապետությունից և Վրաստանի Հանրապետության Զավախքի տարածաշրջանից եկած և փաստացի ՀՀ-ում բնակվող) ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական օգնությունը և սպասարկումը</p>	<p>տվյալ պոլիկլինիկայում գործող այն նեղ մասնագիտական ծառայությունները, որոնք չեն ներառված պետական պատվերի ծավալներում և որոնց համար տվյալ պետական պատվեր չի տեղադրվել</p>
<p>անհետաձգելի ամբուլատոր բժշկական օգնություն՝ տեղամասային թերապևտի, տեղամասային մանկաբույժի, ընտանեկան բժշկի և նեղ մասնագետների կողմից բժշկական ցուցումների առկայության դեպքում</p>	<p>բնակչության սոցիալապես անապահով և հատուկ խմբերում չընդգրկված անձանց համար՝ ֆիզիոթերապևտիկ բժշկական օգնությունը</p>
<p>լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունները՝ ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական կազմակերպությունների բժիշկների ուղեգրմամբ</p>	<p>բնակչության առանձին խմբերի նախնական (աշխատանքի ընդունվելիս) և պարբերական (աշխատանքի ընթացքում) բժշկական զննությունները՝ ՀՀ կառավարության 27.03.2003 թվականի N 347-Ն և 15.07.2004 թվականի N 1089-Ն որոշումներին համապատասխան</p>

նախագորակոչային և գորակոչային տարիքի անձանց բժշկական օգնության կազմակերպումը և ամբուլատոր բուժումը
հանրակրթական (պետական) դպրոցների և նախադպրոցական (պետական) ուսումնական հաստատությունների մանկավարժների, դաստիարակների և դայակների առողջական վիճակի պարբերական բժշկական քննությունները
վարորդի թեկնածուների, վարորդական վկայական ունեցող անձանց բժշկական հավատարմագրումը ճանապարհային ոստիկանության գրավոր պահանջագրերի հիման վրա
ժամանակավոր անաշխատունակության փորձաքննություն, բժշկասոցիալական փորձաքննության ուղեգրում
բնակչության սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկված անձանց ուղեգրում հիվանդանոցային բուժման և/կամ հատուկ ու դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտությունների
տնային կանչերի իրականացումը